**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 նոյեմբերի 2022 թվականի թիվ 429-Ա

## «ԳԼՈԲԱԼ ՇԻՓՓԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի նոյեմբերի 8-ի նիստում, քննարկելով «Գլոբալ Շիփփինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

***<u>1. Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.</u>***

Հանձնաժողովը 2022 թվականի մայիսի 10-ի ««Գլոբալ Շիփփինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 183-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 183-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-00320/22 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**)։

Ընկերությունը թիվ 183-Ա որոշումը ստացել է 2022 թվականի մայիսի 13-ին և 2022 թվականի մայիսի 27-ին Հանձնաժողով է ներկայացրել սույն գործի վերաբերյալ դիրքորոշում (այսուհետ նաև՝ **Դիրքորոշում**)։

Վարույթի շրջանակում 2022 թվականի հունիսի 28-ին Հանձնաժողովի գտնվելու վայրում տեղի է ունեցել Հանձնաժողովի նիստ (այսուհետ նաև՝ **Նիստ**), որի ընթացքում քննարկվել է Վարույթում առկա փաստական հանգամանքների վերաբերյալ հարցը։

Հանձնաժողովի 2022 թվականի օգոստոսի 4-ի ««Գլոբալ Շիփփինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-00320/22 վարույթի

ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 292-Ա որոշմամբ վարույթի ժամկետը 2022 թվականի օգոստոսի 10-ից եռամսյա ժամկետով երկարաձգվել է:

Հանձնաժողովի 2022 թվականի օգոստոսի 30-ի ««Գլոբալ Շիփփինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-00320/22 վարույթից ԱՄՆ-ից ՀՀ օդային առաքումների առնչությամբ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության իրավախախտման վերաբերյալ վարույթն առանձնացնելու և թիվ ՀԳ-01863/22 վարույթին միացնելու մասին» թիվ 308-Ա (այսուհետ նաև՝ **թիվ 308-Ա որոշում**) որոշմամբ ԱՄՆ-ից ՀՀ օդային առաքումների առնչությամբ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության իրավախախտման վերաբերյալ վարույթը թիվ ՀԳ-00320/22 վարույթից առանձնացվել է և միացվել թիվ ՀԳ-01863/22 վարույթին:

***2. Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը.***

Ֆիզիկական անձ Ռոբերտ Դավթյանը 2022 թվականի ապրիլի 12-ին ներկայացրել է հաղորդում (այսուհետ նաև՝ **Հաղորդում**)՝ նշելով, որ Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ www.globbing.am կայքում (այսուհետ նաև՝ **Կայք**) հրապարակված է հետևյալ գովազդը. «Ռուսաստանից Հայաստան 5-10 աշխ. օր, այնուհետև նշվում է, որ «եղանակային անբարենպաստ պայմանների հետևանքով Ռուսաստանից վերգետնյա առաքման ժամկետները հնարավոր է տատանվեն մինչև 5 աշխ. օր»:

Հաղորդում ներկայացրած անձ Ռոբերտ Դավթյանը նաև հայտնել է, որ www.globbing.am կայքում հրապարակված է մեկ այլ՝ 2-4 աշխատանքային օրում ԱՄՆ-ից Հայաստան փոխադրում իրականացնելու վերաբերյալ գովազդ, սակայն իրականում այն կարող է տևել 10-ից ավել, և Ընկերությունն այս դեպքում նույնպես որևէ միջոց չի ձեռնարկում մոլորեցնող գովազդ չհրապարակելու ուղղությամբ:

Վարույթը հարուցվել է Հաղորդման հիման վրա՝ Ընկերության կողմից առաքման ծառայությունների համար գործնականից տարբերվող ժամկետ հայտարարելու միջոցով հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

***3. Ընկերության դիրքորոշումը.***

Ընկերությունը հայտնել է, որ իր կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Ռուսաստանից վերգետնյա առաքումով ՀՀ (այսուհետ նաև՝ **Առաքում կամ Առաքումներ**) 2022 թվականի հունվարի 1-ից մինչև ապրիլի 20-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է պատվերների առաքում, որից 29%-ը մինչև 10 աշխատանքային օրում, իսկ 43%-ը՝ 11-15 աշխատանքային օրում:

Ընկերությունը նշել է, որ 2022 թվականի հունվարի 1-ից մինչև ապրիլի 20-ն ընկած ժամանակահատվածում (այսուհետ նաև՝ **Հաշվետու ժամանակահատված**) Ընկերության առաքումների միջին ժամկետը կազմել է 13 օր, ինչը, ըստ էության, չի գերազանցում Ընկերության կողմից հայտարարված 10+5 օրերի քանակը: Միևնույն ժամանակ

հայտարարված ժամկետներից ուշ առաքումը պայմանավորված է եղել Լարս ավտոճանապարհի փակ լինելով, ինչի մասին Ընկերության հաճախորդները ստացել են համապատասխան ծանուցումներ:

Ի համեմատություն Հանձնաժողովի կողմից ներկայացված Հաշվետու ժամանակահատվածի՝ Ընկերությունը ներկայացրել է նաև 2021 թվականի հունիսի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում առաքման տվյալները: Մասնավորապես՝ պատվերների 87% առաքվել էր մինչև 10 աշխատանքային օրում, իսկ 12%՝ մինչև 11-15 աշխատանքային օրում:

Ընկերությունը հայտնել է, որ ցուցաբերել է պատշաճ ջանասիրություն և ներդրել է բոլոր հնարավոր ջանքերը՝ առաքումները հայտարարված ժամկետներում իրականացնելու համար, սակայն իրենից անկախ պատճառներով առանձին դեպքերում այդ ժամկետները չեն պահպանվել:

Ընկերությունը նշել է, որ հաճախորդները Ընկերության Կայքից, «globbing» բջջային հավելվածից (այսուհետ նաև՝ **Հավելված**), ծառայություններից օգտվելիս անվերապահորեն համաձայնում են Ընկերության դրույթների հետ, համաձայն որոնց՝ Գլոբբինգի կողմից հայտարարված փոխադրման ժամկետները պայմանական են և դրանց խախտման համար Ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում: Հետևաբար հաճախորդներից յուրաքանչյուրը, այդ թվում՝ Հաղորդում ներկայացրած անձը, տեղեկացված է եղել նման դրույթի առկայության մասին:

Ընկերությունը նշել է, որ թիվ 183-Ա որոշմամբ վկայակոչված է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 21-րդ հոդվածի 1-ին մասն ամբողջությամբ, ինչի արդյունքում անհասկանալի է, թե Ընկերության գործողությունները հասարակության մոլորեցման հատկապես ինչպիսի դրսևորում են հանդիսանում: Նշվածն ունի էական նշանակություն վարչական վարույթի որոշակիության և կանխատեսելիության համատեքստում:

Այդուհանդերձ, Ընկերությունը, անդրադառնալով Օրենքի 21-րդ հոդվածում թվարկված դեպքերից յուրաքանչյուրին, նշել է, որ Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ձևակերպումից բխում է, որ արարքը պատասխանողին վերագրելու համար հարկավոր է կատարել գործողություն կամ դրսևորել այնպիսի վարքագիծ, որին բնութագրիչ կլինեն մոլորեցնելու հատկանիշներ: Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և սույն գործի փաստերի համադրմամբ Ընկերությունը գտել է, որ Ընկերության գործողություններում չեն կարող առկա լինել նշված դրույթի հատկանիշները:

Ընկերությունը նշել է նաև, որ հասարակությանը մոլորեցնելու նպատակ չի հետապնդել, իսկ համապատասխան ծառայություններից օգտվող անձինք էլ տեղյակ են եղել և տվել են իրենց համաձայնությունը՝ Գլոբբինգի կողմից հայտարարված փոխադրման ժամկետների պայմանական լինելու վերաբերյալ, հետևաբար այն պարագայում, երբ օգտատիրոջը նախօրոք տեղյակ է պահվում նման հանգամանքների հնարավորության մասին, ապա խոսք չի կարող գնալ տնտեսավարող սուբյեկտի մոտ մոլորեցնելու նպատակի առկայության վերաբերյալ:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից բխում է, որ իրավախախտում վերագրելու համար հարկավոր է տնտեսավարող սուբյեկտի կողմից կատարվի այնպիսի գործողություն կամ դրսևորվի այնպիսի վարքագիծ, ըստ որի իրացվող ապրանքների մասին տեղեկատվությունը կապակողմնորոշի ձեռքբերողին:

Ըստ Ընկերության՝ իր գործողություններում առկա չի կարող լինել նաև անբարեխիղճ մրցակցության տվյալ դրսևորման ձևը, քանի որ ձեռքբերողները նախօրոք տեղեկացվում են հնարավոր ուշացումների մասին և իրենց համաձայնությունն են տալիս ժամկետների պայմանական լինելու վերաբերյալ, հետևաբար ապակողմնորոշման մասին խոսք գնալ չի կարող:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված արարքի կապակցությամբ Ընկերությունը նշել է, որ իր կողմից մատուցվող ծառայությունները պարզ, մատչելի և հասկանալի ձևով ներկայացված են ինչպես Կայքում, այնպես էլ սպառողների հետ կնքվող պայմանագրում:

Այսպիսով, Ընկերությունը փաստել է, որ սպառողներին մի քանի անգամ տրվում է ամբողջական տեղեկատվություն ինչպես ծառայությունների մատուցման, այնպես էլ հնարավոր ռիսկերի վերաբերյալ, հետևաբար փաստացի երկու անգամ սպառողը ստանում է ամբողջական տեղեկատվություն, ինչպես նաև տեղեկացվում է Ընկերության հնարավոր ուշացումների և դրա հետևանքով Ընկերության կողմից տրամադրված արտոնությունների մասին:

Ըստ Ընկերության՝ Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից բխում է, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից պետք է կատարվեն դրանում նշված գործողություններից առնվազն մեկը, ինչն էլ պետք է հանգեցնի տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը, արգելմանը կամ սպառողի շահերը վնասելուն, մինչդեռ Ընկերության կողմից չի կատարվել վերոգրյալ իրավադրույթով նախատեսված գործողություններից որևէ մեկը կամ այլ օրենքին հակասող որևէ գործողություն, հետևաբար նման պայմաններում առարկայազուրկ է խոսել հետևանքների մասին:

Ընկերությունը նշել է նաև, որ միայն առաքումն ուշացնելու հանգամանքը դեռևս բավարար չէ եզրահանգման գալու համար առ այն, որ Ընկերության կողմից ժամկետներ սահմանելը նպատակ է հետապնդել հասարակությանը մոլորեցնելու, քանի որ սպառողները մինչև Ընկերության բաժանորդ դառնալը, ինչպես նաև ծառայություններից փաստացի օգտվելը, տեղեկացվում են սահմանված ժամկետների պայմանական լինելու և հնարավոր ուշացումների, ինչպես նաև ուշացումների դեպքում գնի վերահաշվարկ կատարելու հնարավորության մասին, իսկ ուշացումները պայմանավորված են եղել Ընկերության կամքից չկախված տարաբնույթ հանգամանքներով (մաքսային հսկողություն իրականացնող մարմնի կողմից մաքսային հսկողության լրացուցիչ միջոցառումների ձեռնարկումը, Լարսի փակ լինելը և նման այլ հանգամանքներ):

Ընկերությունը հայտնել է, որ թիվ 183-Ա որոշման մեջ մատնանշված արտաքին դիտման արդյունքները նույնպես ակնհայտորեն վկայում են Ընկերության վարքագծում անբարեխիղճ մրցակցության գործողության բացակայության մասին և, հղում

կատարելով Օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, 89-րդ հոդվածի 1-ին մասին և 90-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, խնդրել է Վարույթը կարճել՝ խախտման բացակայության հիմքով:

Նիստի ընթացքում Ընկերության ներկայացուցիչը ամբողջությամբ պնդել է Դիրքորոշման շրջանակներում հայտնածը, միաժամանակ, նշել է, որ առաքումների ուշացումները կրում են մասնավոր բնույթ, դրանք դիտարկվող ժամանակահատվածում 1/5-ի շրջանակում են, հետևաբար այն ծավալի չեն, որ հայտնվեն Հանձնաժողովի քննության տիրույթում: Ընկերության ներկայացուցիչը նշել է, որ Հանձնաժողովին վերապահված՝ սպառողների իրավունքների պաշտպանության գործառույթը պետք է դիտարկել հանրային շահերի սպասարկման համատեքստում, իսկ տվյալ դեպքում ուշացումները շատ մեծ շրջանակի սպառողների չեն վերաբերում, ուստի դրանց հետ կապված հարցերը մասնավոր բնույթի են: Հանձնաժողովի անդամի հարցերին ի պատասխան՝ Ընկերության ներկայացուցիչը նշել է, որ հանրային շահի մասին կարելի է խոսել առնվազն 60-70% ուշացումների դեպքում, քանի որ հաշվետու ժամանակահատվածը տարվա 1/3 մասն է կազմում: Նաև նշել է, որ պետք է հաշվի առնել ոչ միայն խախտումների քանակը, այլև դրանց բնույթը, պարբերականությունը, տևողությունը և դրանց վրա ազդող գործոնները: Առաքման ժամկետի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է՝ օգտագործելով ≈ նշանը, ինչը նշանակում է, որ սպառողներին տրամադրվում է տեղեկատվություն այն մասին, թե իրենց պատվիրած ապրանքը մոտավոր որքան ժամանակում իրենց հասանելի կդառնա:

Ընկերության ներկայացուցիչը նշել է նաև, որ շուկայում ծառայություններ մատուցող ընկերությունները ևս օգտվում են նույն ծառայություններից, որոնցից օգտվում է Ընկերությունը, ուստի Ընկերության մրցակիցների կողմից հայտարարվում են գրեթե նույն ժամկետները:

Ընկերությունը հայտնել է, որ, գնահատելով առաքման ժամկետների ուշացման պատճառները՝ ռուս-ուկրաինական իրադարձությունների արդյունքում իրավիճակի սրացմամբ պայմանավորված, 2022 թվականի հուլիսի 29-ին առաքման ժամկետները երկարացրել է՝ սահմանելով ≈ 7-13 աշխատանքային օր, որը պահպանվում է, իսկ ժամկետի փոփոխությունը փաստում է այն մասին, որ Ընկերությունը որևէ կերպ նպատակ չի հետապնդում մոլորեցնելու իր հաճախորդներին, ավելին՝ ձեռնարկում է հնարավոր բոլոր միջոցները ապահովելու համար առաքման ժամկետների կանխատեսելիությունը:

***<u>4. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.</u>***

1. Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի ապրիլի 25-ի թիվ 000773 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 000773 գրություն**) Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվությունը Ընկերության կողմից Հաշվետու ժամանակահատվածում Ռուսաստանից իրականացված վերգետնյա առաքումով (≈5-10 աշխատանքային օր տևողությամբ հայտարարված) պատվերների քանակը՝ տոկոսային

արտահայտությամբ նշելով, թե դրանցից քանի տոկոսն է ՀՀ առաքվել մինչև 10 աշխատանքային օրում և քանի տոկոսը մինչև 15 աշխատանքային օրում, առաքումների ընդհանուր թվում որքա՞ն է փաստացի կազմել միջին տևողությունը՝ երկայացնելով համապատասխան ապացույցներ:

Ի պատասխան թիվ 000773 գրության՝ Ընկերությունը 2022 թվականի մայիսի 3-ին Հանձնաժողով է ներկայացրած գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից 2021 թվականի դեկտեմբերին և Հաշվետու ժամանակահատվածում Ռուսաստանից իրականացվել են վերգետնյա առաքումով հետևյալ քանակով պատվերներ.

1) պատվերների թիվը՝ ,
2) մինչև 10 աշխատանքային օրում առաքված պատվերների քանակը՝ (29%),
3) մինչև 11-15 աշխատանքային օրում առաքված պատվերների քանակը՝ (43%),
4) փաստացի միջին տևողությունը՝ 13 օր:

Ի համեմատություն նշված ժամկետների Ընկերությունը Հանձնաժողով է ներկայացրել 2021 թվականի հունիսի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում տվյալներ (Լարս ավտոճանապարհի բաց լինելու պայմաններում).

1) պատվերների թիվը՝ ,
2) մինչև 10 աշխատանքային օրում առաքված պատվերների քանակը՝ (87%),
3) մինչև 11-15 աշխատանքային օրում առաքված պատվերների քանակը՝ (12%),
5) փաստացի միջին տևողությունը՝ 9 օր:

Ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության (1 Excel ֆայլ) համաձայն՝ Հաշվետու ժամանակահատվածում Ռուսաստանից իրականացված վերգետնյա առաքումով (≈5-10 աշխատանքային օր տևողությամբ հայտարարված) պատվերների ընդհանուր քանակը կազմել է , որից մինչև 5 աշխատանքային օր ներառյալ տևողությամբ առաքվել է պատվեր (1,28%), մինչև 10 աշխատանքային օր ներառյալ տևողությամբ առաքվել է պատվեր (36,35%), 11-15 աշխատանքային օրում առաքվել է պատվեր, տոկոսային արտահայտությամբ՝ 39,97%, իսկ հայտարարված տասնհինգօրյա առավելագույն ժամկետի խախտմամբ առաքվել է պատվեր (23,6%):

2. Հանձնաժողովի նախագահի պաշտոնակատարի 2022 թվականի մայիսի 4-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 0057-Ա հրամանի հիման վրա 2022 թվականի մայիսի 4-ին Ընկերության «globbing» բջջային հավելվածում իրականացվել է արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 0057 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 0057 արձանագրություն**):

Թիվ 0057 արձանագրության համաձայն՝ «globbing» բջջային հավելվածում հասանելի է եղել հետևյալը. «Առաքման երկիր - Ռուսաստան, առաքման եղանակ – էքսպրես 2-5 աշխ. օր, առաքման եղանակ – ստանդարտ 5-10 աշխ. օր, Ռուսաստան էքսպրես ≈ 1 կգ./2000դր., առաքման արժեքը – 0 դր.:» Հավելվածում առկա է նաև հետևյալ տեղեկատվությունը. «Ձեր հասցեն Ռուսաստանում» ստանդարտ բաժնում նշվում է.

«Եղանակային անբարենպաստ պայմանների հետևանքով Ռուսաստանից վերգետնյա առաքման ժամկետները հնարավոր է տատանվեն մինչև 5 աշխ. օր» (այսուհետ նաև՝ **Հրապարակում 1**):

3. Հանձնաժողովի նախագահի պաշտոնակատարի 2022 թվականի մայիսի 4-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 0058-Ա հրամանի հիման վրա 2022 թվականի մայիսի 4-ին Ընկերության Կայքում իրականացվել է արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 0058 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 0058 արձանագրություն**):

Թիվ 0058 արձանագրության համաձայն՝ Ընկերության Կայքում 2022 թվականի մայիսի 4-ի դրությամբ հրապարակված է եղել հետևյալը. «Վերգետնյա առաքում՝ Ռուսաստանից ≈ 5-10 աշխ. Օր, առաքման գինը՝ 1000 դր/կգ»:

«Վերգետնյա առաքում» բաժնում Ռուսաստան ≈ 5-10 աշխ. օրում առաքման վերաբերյալ ենթաբաժնում առկա է հղում, որտեղ նշվում է հետևյալ հայտարարությունը. «Եղանակային անբարենպաստ պայմանների հետևանքով Ռուսաստանից վերգետնյա առաքման ժամկետները հնարավոր է տատանվեն մինչև 5 աշխ. օր» (այսուհետ նաև՝ **Հրապարակում 2,** Հրապարակում 1-ը և Հրապարակում 2-ը միասին նաև՝ **Հրապարակում կամ Հրապարակումներ**):

Արձանագրությանը կից տեսաձայնագրման (տեսաձայնագրման 04:38 րոպեից սկսած) համաձայն՝ Կայքի «Ընդհանուր դրույթներ և պայմաններ» բաժնի 3-րդ գլխի 7-րդ կետում հրապարակված է հետևյալը. «Գլոբբինգն իրավունք ունի այն ժամանակահատվածում, երբ պատվերների ընդհանուր ծավալը մեծանում է (տոնական օրեր, զեղչային ծրագրեր կամ միջոցառումներ և այլն) հետաձգել պատվերների առաքման ժամկետները, ինչպես նաև կասեցնել որոշակի Ծառայությունների մատուցումը»: Նույն գլխի 10-րդ կետում հրապարակված է հետևյալը. «Գլոբբինգը պատասխանատվություն է կրում միայն իր պահեստ հասած և պահեստում ընդունված Պատվերներ փոխադրման համար: Գլոբբինգի կողմից հայտարարված փոխադրման ժամկետները պայմանական են և դրանց խախտման համար Ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում»:

4. Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի հունիսի 15-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 115-Ա հրամանի հիման վրա 2022 թվականի հունիսի 20-ին Ընկերության «Globbing» և «Globbing Armenia» անվանումներով ֆեյսբուքյան էջերում իրականացվել է արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 115 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 115 արձանագրություն**):

Թիվ 115 արձանագրության համաձայն՝ «Globbing Armenia» անվանումով ֆեյսբուքյան էջի «Отзывы» բաժնում, ի թիվս այլնի, առկա են եղել Ընկերության ինչպես ընդհանուր գործունեության (մատուցած ծառայությունների) վերաբերյալ բացասական արձագանքներ (ծանրոցների վնասման, աշխատակիցների թերացման, անփույթ և անտարբեր աշխատանքի), այնպես էլ ծանրոցները ժամանակին առաքելու, առաքման ժամկետների փոփոխությունների և վերջնաժամկետ չնշելու վերաբերյալ:

5. Ընկերության կողմից 2022 թվականի հուլիսի 8-ին Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն՝ 2021 թվականին Ռուսաստանից իրականացված վերգետնյա առաքումներից (≈5-15 աշխատանքային օր տևողությամբ հայտարարված) ստացված հասույթի չափը կազմել է ՀՀ դրամ:

6. Հանձնաժողովի նախագահի պաշտոնակատարի 2022 թվականի հուլիսի 20-ի թիվ 003686 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 003686 գրություն**) Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) Ընկերության կողմից Հաշվետու ժամանակահատվածում Ռուսաստանից իրականացված վերգետնյա (≈5-10 աշխատանքային օր) առաքումների ուշացումների դեպքում ի՞նչ պայմաններով (չափ, ժամկետ և այլն) է իրականացվել գնիջեցումը,

2) Հաշվետու ժամանակահատվածում Ռուսաստանից իրականացված վերգետնյա (≈5-10 աշխատանքային օր) առաքումների գնիջեցման արդյունքում որքա՞ն է կազմել յուրաքանչյուր առաքման գինը,

3) արդյո՞ք Հաշվետու ժամանակահատվածում Ռուսաստանից իրականացված վերգետնյա (≈5-10 աշխատանքային օր) առաքումների գնիջեցումները կիրառվել են բոլոր ուշացումների դեպքում, եթե այո, ապա սկզբնական գնի նկատմամբ ի՞նչ համամասնությամբ:

Ընկերությունը, ի պատասխան թիվ 003686 գրության, 2022 թվականի հուլիսի 25-ին Հանձնաժողով է ներկայացրել պահանջված տեղեկատվությունը, համաձայն որի, ՌԴ-ից ՀՀ վերգետնյա (5-10 աշխատանքային օր) առաքումների ժամկետների ուշացման դեպքում գնիջեցումներ չեն կիրառվել հետևյալ հանգամանքների հաշվառմամբ.

- հայտարարված ժամկետներից ուշ առաքումը պայմանավորված է եղել Լարս ավտոճանապարհի փակ լինելով, ինչի մասին Ընկերության հաճախորդները ստացել են համապատասխան ծանուցումներ.

- վերգետնյա առաքման միջոցով Ընկերությունը նաև առաքել է այնպիսի ծանրոցներ, որոնք ի սկզբանե պատվիրվել են օդային առաքման եղանակով, սակայն նման ապրանքներն օդային առաքման միջոցով արգելված է եղել, ինչի մասին Ընկերության պաշտոնական կայքում խնդրո առարկա ժամանակահատվածում առկա է եղել համապատասխան հայտարարություն:

- խնդրո առարկա ժամանակահատվածում առաքման փաստացի տևողությունը կազմել է 13 օր՝ հայտարարված 5-օրյա շեղման շրջանակներում:

7. Հանձնաժողովի նախագահի պաշտոնակատարի 2022 թվականի օգոստոսի 4-ի թիվ 004225 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 004225 գրություն**) Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) Ընկերության 2021 թվականի տարեկան հասույթը ձևավորող տարրերի վերաբերյալ՝ նշելով յուրաքանչյուր ծառայության անվանումը և դրանից ստացված հասույթի չափը,

2) Ընկերության կողմից 2021 թվականին ՌԴ-ից ՀՀ իրականացված վերգետնյա առաքման ծառայության տեսակների, դրանցից յուրաքանչյուրի ժամկետների և հասույթի վերաբերյալ,

3) Ընկերության կողմից 2021 թվականի ընթացքում ՌԴ-ից ՀՀ օդային առաքման միջոցով պատվիրված առաքումները վերգետնյա առաքման միջոցով իրականացնելու դեպքում ստացված հասույթը վերգետնյա կամ օդային առաքման ծառայության հասույթի շրջանակում հաշվառելու վերաբերյալ՝ նշելով օդային առաքման շրջանակում հաշվառելու դեպքում այդ առաքումների հասույթի ընդհանուր չափը:

Ի պատասխան թիվ 004225 գրության՝ Ընկերությունը 2022 թվականի օգոստոսի 16-ին Հանձնաժողով է ներկայացրած գրությամբ և ի լրումն դրա օգոստոսի 25-ին ներկայացրած գրությամբ հայտնել է, որ առաքման ծառայության ժամկետների վերաբերյալ պահպանված տեղեկատվություն առկա չէ: 2021 թվականի ընթացքում Ընկերության կողմից ՌԴ-ից ՀՀ օդային առաքման միջոցով պատվիրված առաքումները վերգետնյա առաքման միջոցով իրականացնելու դեպքեր չեն եղել:

Ընկերությունը տրամադրել է նաև թիվ 004225 գրության 1-ին կետով պահանջված տեղեկատվությունը:

8. Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 006613 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 006613 գրություն**) Հանձնաժողովը դիմել է Ընկերությանը՝ խնդրելով Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) Ընկերության կողմից 2022 թվականի ապրիլի 21-ից մինչև 2022 թվականի մայիսի 10-ն ընկած ժամանակահատվածում ՌԴ–ից ՀՀ վերգետնյա առաքումների վերաբերյալ՝ համաձայն կից ներկայացվող Ձևանմուշի,

2) ո՞ր հանգամանքն (հանգամանքները) է Ընկերության կողմից հիմք հանդիսացել 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի մայիսի 10-ն ընկած ժամանակահատվածում ՌԴ–ից ՀՀ վերգետնյա առաքումներ իրականացնելիս ≈5-10 աշխատանքային օր, իսկ հնարավոր տատանումների համար մինչև 5 աշխատանքային օր ժամկետների սահմանման համար՝ կցելով հիմնավորող բոլոր փաստաթղթերի պատճենները և այլ նյութերը:

Ընկերությունը, ի պատասխան թիվ 006613 գրության, 2022 թվականի հոկտեմբերի 31-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ ՌԴ-ից ՀՀ վերգետնյա առաքումների համար ≈ 5-10 աշխատանքային օր ժամկետը սահմանվել է դեռևս 2016 թվականի մայիս ամսից՝ երեք անգամ նախնական թեստային առաքումները կազմակերպելուց հետո: Թեստային առաքումների արդյունքում առաքման միջին տևողությունը կազմել է ութ աշխատանքային օր, որի արդյունքում սահմանվել է ≈ 5-10 աշխատանքային օր ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված ժամկետը սահմանվել է դեռևս վեց տարի առաջ՝ Ընկերությունը հայտնել է, որ դրա վերաբերյալ որևէ փաստաթուղթ կամ տեղեկատվություն չի պահպանվել:

Ինչ վերաբերում է հնարավոր տատանումների համար մինչև 5 աշխատանքային օր սահմանելուն, Ընկերությունը նշել է, որ վարչական վարույթի շրջանակներում կազմակերպված բանավոր լսումների շրջանակներում Ընկերությունը հայտնել է, որ տատանումների համար լրացուցիչ ժամկետ սահմանելը պայմանավորված է եղել Լարսի ավտոճանապարհի փակ լինելու հանգամանքը, թեև բանավոր լսման ժամանակ

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվող ժամանակահատվածը վերաբերում էր 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի ապրիլի 20-ն ընկած ժամանակահատվածին, այնուամենայնիվ 2022 թվականի ապրիլի 21-ից մինչև 2022 թվականի մայիսի 10-ն ընկած ժամանակահատվածում նշված հանգամանքները պահպանվել են՝ այդ թվում՝ ռուս-ուկրաինական իրադարձություններով պայմանավորված:

Լարսի ավտոճանապարհը փակ լինելու վերաբերյալ տեղեկատվությունը սույն գրությունը ներկայացնելու օրվա դրությամբ հասանելի է եղել այդ թվում հետևյալ հղումներով՝

1) http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2022/02/09/0800,
2) http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2022/02/25/0800,
3) http://www.mes.am/hy/roadsinarmenia/archive/2022/03/,
4) http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2022/04/05/0800,
5) http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2022/05/07/0800,
6) http://armeniasputnik.am/20220507/larsy-bacvel-e-mardatar-meqenaneri-hamar-41800895.html:

Նույն տեղեկատվության համաձայն՝ Ընկերության կողմից 2022 թվականի ապրիլի 21-ից մինչև 2022 թվականի մայիսի 10-ն ընկած ժամանակահատվածում ՌԴ-ից ՀՀ վերգետնյա առաքումով (≈5-10 աշխատանքային օր տևողությամբ հայտարարված) պատվերների ընդհանուր քանակը կազմել է , որից գովազդում հայտարարված տասնհինգօրյա առավելագույն ժամկետի խախտմամբ առաքվել է պատվեր (26,6%), մինչև 5 աշխատանքային օր ներառյալ տևողությամբ առաքվել է պատվեր (1,4%), մինչև 10 աշխատանքային օր ներառյալ տևողությամբ առաքվել է պատվեր (11,23%):

9. Տեղեկատվության բաց հարթակներում (https://www.azatutyun.am/a/31720152.html, https://hetq.am/hy/article/141638 և այլն) առկա տեղեկատվության համաձայն՝ ռուս-ուկրաինական իրադարձությունները սկսվել են 2022 թվականի փետրվարի 24-ին:

10. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում (http://www.mes.am/hy/) «Նորություններ» բաժնի «Ճանապարհները Հայաստանում» ենթաբաժնում առկա տեղեկատվության համաձայն՝ Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը (այսուհետ նաև՝ Լարսի ճանապարհ) 2021 թվականի հունվարից ապրիլ ամիսներին առավելապես եղել է փակ, իսկ բաց եղած օրերին ռուսական կողմում առկա են եղել մեծաթիվ կուտակված բեռնատար ավտոմեքենաներ, մասնավորապես տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումներով՝

http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2021/01/12/1100/,
http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2021/01/20/2030/,
http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2021/01/23/2000/,
http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2021/02/01/1135/,
http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2021/02/02/1030/,

http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2021/02/07/0840/,
http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2021/02/10/1145/,
http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2021/02/17/2030/,
http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2021/02/22/0840/,
http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2021/02/25/1850/,
http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2021/03/04/1040/,
http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2021/03/10/1000/,
http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2021/03/17/1125/,
http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2021/03/19/1850/,
http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2021/03/29/09553/,
http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2021/04/06/1015/,
http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2021/04/06/1000/,
http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2021/04/11/1025/,
http://www.mes.am/hy/roadsinarmenia/item/2021/04/15/1040/:

11. ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստրի տվյալների համաձայն՝ Ընկերությունը հիմնադրվել է 2015 թվականի մարտի 7-ին:

***5. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.***

1. Ընկերությունը գործունեություն է ծավալում 2015 թվականից:
2. Հավելվածում հասանելի է եղել հետևյալ հայտարարությունը.

«Առաքման երկիր - Ռուսաստան, առաքման եղանակ – ստանդարտ 5-10 աշխ. օր»: Հավելվածում առկա է նաև հետևյալ տեղեկատվությունը. «Եղանակային անբարենպաստ պայմանների հետևանքով Ռուսաստանից վերգետնյա առաքման ժամկետները հնարավոր է տատանվեն մինչև 5 աշխ. օր»:

3. Կայքում 2022 թվականի մայիսի 4-ի դրությամբ հրապարակված է եղել հետևյալ հայտարարությունը. «Վերգետնյա առաքում՝ Ռուսաստանից ≈ 5-10 աշխ. օր, առաքման գինը՝ 1000 դր/կգ»: «Վերգետնյա առաքում» բաժնում Ռուսաստան ≈ 5-10 աշխ. օրում առաքման վերաբերյալ ենթաբաժնում առկա է հղում, որտեղ նշվում է հետևյալ հայտարարությունը. «Եղանակային անբարենպաստ պայմանների հետևանքով Ռուսաստանից վերգետնյա առաքման ժամկետները հնարավոր է տատանվեն մինչև 5 աշխ. օր»:

4. Կայքի «Ընդհանուր դրույթներ և պայմաններ» բաժնի 3-րդ գլխի 7-րդ կետում հրապարակված է հետևյալը. «Գլոբբինգն իրավունք ունի այն ժամանակահատվածում, երբ պատվերների ընդհանուր ծավալը մեծանում է (տոնական օրեր, զեղչային ծրագրեր կամ միջոցառումներ և այլն) հետաձգել պատվերների առաքման ժամկետները, ինչպես նաև կասեցնել որոշակի Ծառայությունների մատուցումը»: Նույն գլխի 10-րդ կետում հրապարակված է հետևյալը. «Գլոբբինգը պատասխանատվություն է կրում միայն իր պահեստ հասած և պահեստում ընդունված Պատվերներ փոխադրման համար:

Գլոբբինգի կողմից հայտարարված փոխադրման ժամկետները պայմանական են և դրանց խախտման համար Ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում»:

5. Ընկերության «Globbing Armenia» անվանումով ֆեյսբուքյան էջի «Отзывы» բաժնում, ի թիվս այլնի, առկա են եղել Ընկերության ինչպես ընդհանուր գործունեության (մատուցած ծառայությունների) վերաբերյալ բացասական արձագանքներ (ծանրոցների վնասման, աշխատակիցների թերացման, անփույթ և անտարբեր աշխատանքի), այնպես էլ ծանրոցները ժամանակին առաքելու, առաքման ժամկետների փոփոխությունների և վերջնաժամկետ չնշելու վերաբերյալ:

6. Հաշվետու ժամանակահատվածում Առաքումների ընդհանուր քանակը կազմել է , որից՝

- մինչև 5 աշխատանքային օր ներառյալ տևողությամբ առաքվել է պատվեր, տոկոսային արտահայտությամբ՝ 1,28%,
- մինչև 10 աշխատանքային օր ներառյալ տևողությամբ առաքվել է պատվեր, տոկոսային արտահայտությամբ՝ 36,35%,
- 11-15 աշխատանքային օրում առաքվել է պատվեր, տոկոսային արտահայտությամբ՝ 39,97%,
- հայտարարված տասնիհինգօրյա առավելագույն ժամկետի խախտմամբ առաքվել է պատվեր, տոկոսային արտահայտությամբ 23,66%,
- 10 աշխատանքային օրը գերազանցող ժամկետում առաքվել է պատվեր, տոկոսային արտահայտությամբ՝ 63,63%:

7. Ընկերության կողմից 2022 թվականի ապրիլի 21-ից մինչև 2022 թվականի մայիսի 10-ն ընկած ժամանակահատվածում Առաքանումների ընդհանուր քանակը կազմել է , որից՝

- մինչև 5 աշխատանքային օր ներառյալ տևողությամբ առաքվել է պատվեր, տոկոսային արտահայտությամբ՝ 1,4%,
- մինչև 10 աշխատանքային օր ներառյալ տևողությամբ առաքվել է պատվեր, տոկոսային արտահայտությամբ 11,23%,
- 11-15 աշխատանքային օրում առաքվել է պատվեր, տոկոսային արտահայտությամբ՝ 61,5%,
- հայտարարված տասնիհինգօրյա առավելագույն ժամկետի խախտմամբ առաքվել է պատվեր, տոկոսային արտահայտությամբ 27,2%,

8. 2021 թվականի հունվարից ապրիլ ամիսներին Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհին առավելապես եղել է փակ, իսկ բաց եղած օրերին ռուսական կողմում առկա են եղել մեծաթիվ կուտակված բեռնատար ավտոմեքենաներ:

9. Ռուս-ուկրաինական իրադարձությունները սկսվել են 2022 թվականի փետրվարի 24-ին:

10. Ընկերությունը ՌԴ-ից ՀՀ վերգետնյա առաքումների (այսուհետ նաև՝ **Ծառայություն**) ժամկետը սահմանել է 2016 թվականին:

11. Ընկերությունը չի ներկայացրել առաքման հրապարակված ժամկետի սահմանումը հիմնավորող հանգամանքներ և դրանց վերաբերյալ ապացույցներ:

12. Ընկերությունը հրապարակված առաքման ժամկետը փոփոխել է 2022 թվականի հուլիս ամսին՝ սահմանելով ≈ 7-13 աշխատանքային օր:

13. Ընկերության 2021 թվականի հասույթի չափը կազմել է ՀՀ դրամ, որից Առաքումներից ստացված հասույթի չափը կազմել է ՀՀ դրամ:

***6. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.***

***1) Ընկերության կողմից իրավախախտում կատարված լինելու հարցի կապակցությամբ.***

Վարույթը հարուցվել է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով, որի շրջանակներում դիտարկվել է Հաշվետու ժամանակահատվածում Ընկերության վարքագիծը՝ ՌԴ-ից ՀՀ իրականացված վերգետնյա առաքումների ժամկետների առնչությամբ:

Ընկերությունն առարկել է՝ ներկայացնելով հետևյալ փաստարկները.

1) Հաճախորդները Ընկերության Կայքից և Հավելվածից ծառայություններից օգտվելիս անվերապահորեն համաձայնում են Ընկերության դրույթների հետ, համաձայն որոնց՝ Գլոբբինգի կողմից հայտարարված փոխադրման ժամկետները պայմանական են և դրանց խախտման համար Ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում: Հետևաբար հաճախորդներից յուրաքանչյուրը, այդ թվում Հաղորդում ներկայացրած անձը, տեղեկացված է եղել նման դրույթի առկայության մասին:

2) Սպառողներին մի քանի անգամ տրվում է ամբողջական տեղեկատվություն ինչպես ծառայությունների մատուցման, այնպես էլ հնարավոր ռիսկերի վերաբերյալ, հետևաբար փաստացի երկու անգամ սպառողը ստանում է ամբողջական տեղեկատվություն, ինչպես նաև տեղեկացվում է Ընկերության հնարավոր ուշացումների և դրա հետևանքով Ընկերության կողմից տրամադրված արտոնությունների մասին:

3) Առաքումների ուշացումները կրում են մասնավոր բնույթ, դրանք դիտարկվող ժամանակահատվածում 1/5-ի շրջանակում են, հետևաբար այն ծավալի չեն, որ հայտնվեն Հանձնաժողովի քննության տիրույթում: Միևնույն ժամանակ, Ընկերության ներկայացուցչի պնդմամբ, սպառողների իրավունքների պաշտպանության՝ Հանձնաժողովին վերապահված գործառույթը պետք է դիտարկել հանրային շահերի սպասարկման համատեքստում, իսկ տվյալ դեպքում ուշացումները շատ մեծ շրջանակի սպառողների չեն վերաբերում, ուստի դրանց հետ կապված հարցերը մասնավոր բնույթի են: Հանրային շահի մասին կարելի է խոսել առնվազն 60-70% ուշացումների դեպքում, քանի որ հաշվետու ժամանակահատվածը տարվա 1/3 մասն է կազմում: Նաև նշել է, որ պետք է հաշվի առնել ոչ միայն խախտումների քանակը, այլև դրանց բնույթը, պարբերականությունը, տևողությունը և դրանց վրա ազդող գործոնները, առաքման ժամկետի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է՝ օգտագործելով ≈ նշանը, ինչը նշանակում է, որ սպառողներին տրամադրվում է տեղեկատվություն այն մասին, թե իրենց պատվիրած ապրանքը մոտավոր որքան ժամանակում իրենց հասանելի կդառնա:

4) Շուկայում ծառայություններ մատուցող ընկերությունները ևս օգտվում են նույն ծառայություններից, որոնցից օգտվում է Ընկերությունը, ուստի Ընկերության մրցակիցների կողմից հայտարարվում են գրեթե նույն ժամկետները:

5) Ընկերությունը 2022 թվականի հուլիսին փոփոխել է հայտարարված ժամկետը:

6) Թիվ 183-Ա որոշմամբ վկայակոչված է Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասն ամբողջությամբ, ինչի արդյունքում անհասկանալի է, թե Ընկերության գործողությունները հասարակության մոլորեցման հատկապես ինչպիսի դրսևորում են հանդիսանում: Նշվածն ունի էական նշանակություն վարչական վարույթի որոշակիության և կանխատեսելիության համատեքստում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը, նախևառաջ, հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումների պարզաբանմանը.

***1. Ի՞նչպես է դրսևորվում հանրային շահը փնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների առնչությամբ.***

***2. Արդյո՞ք վարքագիծը հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն որակելու համար անհրաժեշտ է նաև Օրենքի 16-րդ հոդվածով սահմանված պայմանների միաժամանակյա առկայությունը:***

***3. Ինչպե՞ս է դրսևորվում հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցության օբյեկտիվ կողմը.***

***4. Ո՞ր դեպքում օրենքին հակասող գովազդը կարող է հանգեցնել հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության.***

***5. Արդյո՞ք մրցակից փնտեսավարող սուբյեկտների կողմից նույնաբնույթ վարքագիծ դրսևորելը բացառում է փնտեսավարող սուբյեկտի վարքագիծը փնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտում որակելու հնարավորությունը:***

***6. Ինչպե՞ս է վարույթով պատասխանողի համար ապահովվում փնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի շրջանակում քննարկվող առերևույթ իրավախախտման վերաբերյալ իրավական որոշակիությունը և կանխատեսելիությունը:***

***7. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթում ո՞վ է կրում վարույթով պատասխանողի համար բարենպաստ փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը:***

***<u>Առաջին հարցադրման կապակցությամբ.</u>***

Սահմանադրության 122-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովելու, ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության նպատակով պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված օրենքով կարող են ստեղծվել ինքնավար մարմիններ:

Օրենքի նախաբանի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր,

նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքը տարածվում է տնտեսավարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների, վարքագծի կամ ակտերի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցությանը, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովն ինքնավար մարմին է, որն ապահովում է տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը, բարեխիղճ մրցակցության և ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ միջավայրը և իրականացնում է սպառողների շահերի պաշտպանությունը:

Վերոգրյալից բխում է, որ Հանձնաժողովի գործունեությունը նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետությունում ազատ տնտեսական մրցակցության վրա հիմնված շուկայական տնտեսության բնականոն կենսագործունեության ապահովմանը, իսկ մրցակցային առողջ միջավայրի ապահովումը Հանձնաժողովի գործունեության կարևորագույն ուղղություններից մեկն է, քանի որ ոչ բարեխիղճ մրցակցությունը անմիջականորեն ազդում է ինչպես շուկայական տնտեսության, այնպես էլ սպառողների շահերի վրա: Այսինքն, Հանձնաժողովը որպես ինքնավար մարմին կոչված է ապահովելու Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանությունը, իսկ տնտեսական մրցակցության բնագավառում հանրային շահը, ի թիվս այլնի, առարկայանում է օրենսդրի կողմից որոշակի վարքագիծը որպես իրավախախտում սահմանելով:

Այսպիսով, Օրենքում որևէ արարքի որպես իրավախախտում նախատեսումը հանդես է գալիս որպես հանրային շահի պաշտպանության երաշխիք և այդ արարքի կատարման յուրաքանչյուր դեպքում ինքնին առկա է հանրային շահի խախտում: Հետևաբար, տնտեսական մրցակցության բնագավառում որևէ իրավախախտման հատկանիշներին արարքի առերևույթ համապատասխանությունը առարկայազուրկ է դարձնում այդ առնչությամբ հանրային շահի առկայության քննարկման անհրաժեշտությունը:

***<u>Երկրորդ հարցադրման կապակցությամբ.</u>***

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն

օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է վարքագիծը անբարեխիղճ որակելու երկու եղանակ. մի դեպքում անբարեխիղճ մրցակցության դեպքերն են Օրենքի 16-24-րդ հոդվածներով սահմանված առանձին դրսևորումները, մյուս դեպքում՝ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշները պարունակող գործողությունը կամ վարքագիծը, եթե այն.

- հակասում է Օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին,

- խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս և սպառողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Այսինքն, օրենսդրի կողմից սահմանված անբարեխիղճ մրցակցության առանձին դրսևորումների սահմանումը, ըստ էության, Օրենքի 16-րդ հոդվածի մասնավոր դեպքերի առարկայացումն է և, հետևաբար, Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշների քննարկման անհրաժեշտությունը բացակայում է անբարեխիղճ մրցակցության մասնավոր դեպքերից յուրաքանչյուրի, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության դեպքում:

***<u>Երրորդ հարցադրման կապակցությամբ.</u>***

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ Օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.

2) ապրանքների որակն անհիմն չափազանցելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք

կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Վերոնշյալ կարգավորումների հիման վրա Հանձնաժողովը հարկ է համարում, նախևառաջ, արձանագրել, որ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցությունն իր բնույթով ունի ձևական կազմ, այսինքն, հետևանքի վրա հասնելը՝ սպառողի մոլորվելու փաստը, վարքագիծը Օրենքի 21-րդ հոդվածով որակելու պարտադիր և անհրաժեշտ պայման չէ: Ըստ այդմ, վարքագիծը հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն իրավախախտում որակելու համար բավարար է միայն մոլորվելու հնարավորությունն ու հավանականությունը, այլ ոչ թե ինքնին մոլորվելու փաստը:

Մյուս կողմից, հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն իրավախախտման ձևական բնույթը դրսևորվում է նրանում, որ արարքը կատարման փաստով համարվում է ավարտված: Այլ կերպ ասած՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից այլ վայրում, այդ թվում՝ ինտերնետային կայքի տարբեր բաժիններում, այլ միջոցով կամ հետագայում անհրաժեշտ տեղեկությունները հայտնելը կամ այլ կերպ հասանելի դարձնելը իրավախախտումը չի վերացնում:

Միևնույն ժամանակ, կարևոր է արձանագրել, որ օրենսդիրը այս իրավախախտման օբյեկտիվ կողմի սպառիչ ցանկ չի սահմանել, այլ մասնավորեցրել է դրանցից մի քանիսը, որոնք արտահայտվում են.

1) ապրանքի բնութագրերի կամ իրացման պայմանների վերաբերյալ թյուր տպավորության՝ ապակողմնորոշելու հնարավորության ստեղծմամբ.

2) սպառողին գովազդվող կամ իրացվող ապրանքի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալով.

3) տնտեսական մրցակցությունը կանխող, սահմանափակող կամ արգելող կամ սպառողների շահերը վնասող օրենքին հակասող գովազդով.

4) ցանկացած այլ դրսևորմամբ, որը ստեղծում է տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց բնութագրերի կամ այլ պայմանների վերաբերյալ մոլորեցնելու հնարավորություն:

Վերոգրյալի համատեքստում ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն առկա չէ, եթե կարող է վնաս հասցվել սպառողների կյանքին, առողջությանը, անվտանգությանը, հասարակական կամ պետական անվտանգությանը կամ շրջակա միջավայրին:

***<u>Չորրորդ հարցադրման կապակցությամբ.</u>***

«Գովազդի մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գովազդը տարբեր տեսակի տեղեկատվական միջոցների օգնությամբ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն է անորոշ թվով անձանց շրջանում, որը կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

Վերոնշյալի հիման վրա Հանձնաժողովը փաստում է, որ որպես գովազդ տեղեկությունների տարածումը պետք է նպատակաուղղված լինի գովազդի օբյեկտը սպառողի ուշադրությանը ներկայացնելուն, վերջինիս համոզելուն, հետևաբար գովազդի կարևոր առանձնահատկությունն օբյեկտի նկատմամբ հետաքրքրվածության խթանումն է, նրա նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումն ու այդպիսի վերաբերմունքի պահպանումը:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝ օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Վկայակոչված հոդվածից բխում է, որ գովազդի միջոցով հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության առկայություն փաստելու համար անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը, մասնավորապես, եթե.

1. գովազդն անբարեխիղճ կամ հակաօրինական է կամ իրականացվում է հավաստիության կամ պատշաճության խախտմամբ կամ այլ կերպ հակասում է օրենքին.

2. գովազդը կարող է կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

***Անդրադառնալով առաջին պայմանի վերլուծությանը՝ հարկ է քննարկել օրենքին հակասող գովազդի յուրաքանչյուր դրսևորման բովանդակությունը, որոնք սահմանված են գովազդի մասին օրենսդրությամբ: Այսպես.***

**1) Անբարեխիղճ գովազդ՝** «Գովազդի մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գովազդ, որի պատվերի, արտադրության և տարածման ընթացքում շրջանցվել են գործող օրենսդրությամբ սահմանված արգելքները և սահմանափակումները: Ընդ որում «Գովազդի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գովազդն անբարեխիղճ ճանաչելու համար պահանջվում է, ի թիվս այլնի, մոլորեցման փաստի առկայությունը: Մոլորեցում ասելով հասկացվում է գովազդի փաստացի ունակությունը ապրանքների հատկությունների, քանակի, որակի, առանձնահատկությունների, գնի և այլ տեղեկությունների, ինչպես նաև դրանց գովազդատուների մասին տեղեկատվության լրիվ կամ մասնակի անարժանահավատության, բացթողումների և աղավաղումների հետևանքով իրավաբանական և ֆիզիկական անձանց ապակողմնորոշումը:

**2) Հակաօրինական գովազդ՝** «Գովազդի մասին» օրենքի 6-րդ հոդվածի իմաստով գովազդ, որի շրջանակում օգտագործվում է, ի թիվս այլնի, քաղաքացիների վստահությունը, փորձի կամ գիտելիքի պակասը, մրցակիցներին կամ նրանց կողմից իրացվող ապրանքների հատկությունները վարկաբեկող արտահայտություններ և այլն:

**3) Հավաստիության խախտմամբ իրականացվող գովազդը՝** «Գովազդի մասին» օրենքի 7-րդ հոդվածի իմաստով գովազդ, որով խախտվում է գովազդի

հավաստիությունը և որը վերաբերում է, ի թիվս այլնի, ապրանքի հատկանիշներին, բնույթին, կազմին, կիրառման պայմաններին և այլն:

**4) Պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդ՝** «Գովազդի մասին» օրենքի 8-րդ հոդվածի իմաստով գովազդ, որը, ի թիվս այլնի, վարկաբեկում է բարոյականության համընդհանուր և ազգային նորմերը, իրավաբանական և ֆիզիկական անձանց և այլն:

**5) Օրենքին հակասող այլ գովազդ՝** գովազդ, որը չի համընկնում վերոնշյալ՝ օրենքին հակասող գովազդի հատուկ դրսևորումների հետ և եթե առկա է հետևյալ պայմաններից առնվազն մեկը.

ա) խախտվել են օրենքով սահմանված առանձին տեսակի ապրանքների գովազդին ներկայացվող հատուկ պահանջները.

բ) գովազդում չեն ներառվել օրենքից բխող անհրաժեշտ տեղեկությունները:

Առանձին տեսակի ապրանքների գովազդին ներկայացվող հատուկ պահանջների օրինակ է «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածը, որում, ի թիվս այլնի, սահմանվում են ալկոհոլային խմիչքների, վիճակախաղի, շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի գովազդի բովանդակությանը ներկայացվող հատուկ պահանջներ:

Օրենսդիրը սահմանել է նաև այնպիսի իրավական կարգավորումներ, որոնցից հնարավոր է բխեցնել գովազդում պարտադիր ներառման ենթակա տեղեկությունները: Որպես օրինակ՝ «Գովազդի մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ գովազդի մասին օրենսդրության նպատակն է, ի թիվս այլնի, գովազդի միջոցով իրավաբանական և ֆիզիկական անձանց մոլորեցման կանխումը, եթե հարցը վերաբերում է ապրանքի բնութագրերին, իրացման պայմաններին և այլ հատկանիշներին: Հետևաբար, գովազդում անհրաժեշտ է ներկայացնել վերոնշյալ տեղեկությունները կամ առնվազն նշել այդ տեղեկությունների գոյության և դրանց հասանելիության աղբյուրի մասին, որպիսի պահանջի չպահպանումը կհանգեցնի օրենսդրության խախտմանը:

***Անդրադառնալով երկրորդ պայմանի բովանդակության բացահայտմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.***

Գովազդի էությունից և դրա՝ օրենքին հակասելու դրսևորումների համադրությունից հետևում է, որ օրենքին հակասող յուրաքանչյուր գովազդի դեպքում առկա է տնտեսական մրցակցությունը կանխելու, սահմանափակելու, արգելելու կամ սպառողների շահերը վնասելու հնարավորություն: Հետևաբար, քանի դեռ կոնկրետ գործի շրջանակներում հաստատված չէ հակառակը, օրենքին հակասող գովազդի դեպքում գործում է **«մրցակցային իրավիճակի վրա բացասական ազդեցություն ունեցած լինելու և սպառողների շահերի վնասված լինելու»** կանխավարկածը:

***<u>Հինգերորդ հարցադրման կապակցությամբ</u>.***

Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ

տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

Սահմանադրության 59-րդ հոդվածի համաձայն.

1) Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2) Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

3) Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

Վկայակոչված նորմերի վերլուծությունից բխում է, որ տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության երաշխավորումը՝ որպես սահմանադրական կարգի հիմունք, ելակետային նշանակություն ունի Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հարաբերությունների կանոնակարգման համար: Տնտեսական գործունեության ազատությունը շուկայական տնտեսության հիմնարար սկզբունքն է և շուկայական տնտեսական հարաբերությունների ձևավորման ու զարգացման օբյեկտիվ նախադրյալը: Միաժամանակ, ազատ տնտեսական գործունեության իրավունքը բացարձակ չէ. այն ենթակա է սահմանափակման՝ ազատ տնտեսական մրցակցության ապահովման նպատակից ելնելով: Հետևաբար նշված երկու իրավական սկզբունքների՝ տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության ներդաշնակ ու հետևողական իրացման պայմաններում է միայն հնարավոր հասնել շուկայական հարաբերությունների վրա խարսխված արդյունավետ տնտեսական համակարգի ձևավորմանն ու կայուն զարգացմանը:

Հանձնաժողովի գնահատմամբ շուկայական տնտեսության պայմաններում մրցակցային միջավայրի կառուցումն այն հիմնական ուղիներից մեկն է, որով պետությունը կարողանում է բարձրացնել հասարակության բարեկեցությունը. տվյալ ոլորտում պետությունը պետք է հետամուտ լինի ինչպես ազատ տնտեսական մրցակցության գոյության համար անհրաժեշտ միջավայրի ստեղծմանը, այնպես էլ տնտեսությանը վնաս հասցնող գործողությունների կանխարգելմանը:

Շարադրվածին համահունչ Օրենքը, ի թիվս այլ հարցերի, սահմանել է Օրենքի նպատակը և դրա կարգավորման առարկան: Այսպես, Օրենքի նախաբանի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքը տարածվում է տնտեսավարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների, վարքագծի կամ ակտերի վրա, որոնք

հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցությանը, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:

Վերը նշված նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ տնտեսավարող սուբյեկտի վարքագիծը տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտում որակելու համար Հանձնաժողովը քննարկման առարկա է դարձնում դրա ազդեցությունը տնտեսական մրցակցության և սպառողների շահերի վնասման կամ դրա հավանականության վրա:

Վերոգրյալի համատեքստում, անդրադառնալով որևէ ոլորտում մի քանի մրցակցի կողմից նույնաբնույթ իրավախախտումների դեպքում դրանց որակման և պատասխանատվության կիրառման անթույլատրելիության հարցին, Հանձնաժողովը փաստում է հետևյալը.

1. Բոլոր տնտեսավարող սուբյեկտները պարտավոր են գործել Սահմանադրությանը, օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան.

2. Որևէ ոլորտում նույնիսկ բոլոր մրցակիցների կողմից նույնաբնույթ իրավախախտումների կատարումը չի բացառում մրցակցային առավելությունների առաջացումը, քանի որ այն առնվազն կարող է դրսևորվել համապատասխան ապրանքային շուկա մտնելու ցանկություն ունեցող տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ, իսկ մյուս կողմից ինքնին խախտվում է հենց առկա մրցակիցների միջև հավասարակշռությունը, քանի որ խախտման հանգամանքները յուրաքանչյուրի դեպքում տարբեր են.

3. Նույնիսկ իրավախախտման արդյունքում մրցակցային առավելություն չստանալը համապատասխան իրավախախտման դեպքում չի բացառում սպառողների շահերի վնասումը կամ դրա հնարավորությունը:

Շարադրվածի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը արձանագրում է, որ մրցակիցների միաժամանակյա ոչ իրավաչափ վարքագիծը չի օրինականացնում դրանցից որևէ մեկի արարքը և հիմք չէ իրավախախտ սուբյեկտին պատասխանատվությունից ազատելու համար:

***<u>Վեցերորդ հարցադրման կապակցությամբ.</u>***

Սահմանադրական դատարանը 2021 թվականի մարտի 26-ի թիվ 1568 որոշմամբ վերահաստատելով և զարգացնելով իր իրավական դիրքորոշումները՝ նշել է.

1) իրավական որոշակիությունը նաև իրավական անվտանգության կարևոր բաղադրիչ է, որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև վստահությունը հանրային իշխանության և նրա հաստատությունների նկատմամբ,

2) իրավական պետությունում բացառապես որոշակի՝ կանխատեսելի, հստակ և բոլորի համար մատչելի օրենսդրական կարգավորումների միջոցով պետք է երաշխավորվի առկա իրավակարգի հետագա գոյության նկատմամբ վստահության պաշտպանությունը, (…)

4) հանրային իշխանության կողմից որոշակիության սկզբունքի խախտումն ուղղակիորեն ազդում է օրենքի գերակայության սկզբունքի վրա և էականորեն նվազեցնում է իրավական պետության կայացվածության աստիճանը,

5) հիմնական իրավունքները կամ ազատությունները սահմանափակող օրենքների հստակությունը, կանխատեսելիությունը և մատչելիությունն ուղիղ համեմատական են հիմնական իրավունքի սահմանափակման աստիճանին. որքան ավելի ինտենսիվ է այդ սահմանափակումը, այնքան ավելի հստակ, կանխատեսելի և մատչելի պետք է լինեն հիշյալ օրենքների ձևակերպումները, որպեսզի երկիմաստություն չառաջացնեն մասնավոր անձանց համար արգելքների, այլ սահմանափակումների կամ նրանց վրա դրված պարտականությունների առկայության և բովանդակության հարցում,

6) հաշվի առնելով կենսական հարցերի բազմազանությունը և նորմաստեղծ ճանապարհով բոլոր իրավիճակներին արձագանքելու անհնարինությունը՝ օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորումների որոշակիության պահանջը չի բացառում անորոշ իրավական հասկացությունների ամրագրումն օրենքներում և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում, սակայն այն պարտադիր պետք է ուղեկցվի նման հասկացությունների համարժեք, իսկ նույնական դեպքերում՝ միատեսակ մեկնաբանությամբ, առանց որի անհնարին կլինի փաստել այդ դրույթների կանխատեսելիությունը (…)»:

Նշված որոշմամբ մեկնաբանված չափանիշներին համահունչ Օրենքի 83-րդ հոդվածով սահմանված են տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման վերաբերյալ կարգավորումներ, այդ թվում՝ վարույթի հարուցման որոշմանը ներկայացվող պահանջներ: Այսպես, Օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարույթի հարուցումը մերժելու, հաղորդումը վերահասցեագրելու կամ վերադարձնելու հիմքերի բացակայության դեպքում Հանձնաժողովը որոշում է կայացնում տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին, որում նշվում են՝

1) վարույթ իրականացնող մարմնի անվանումը,

2) առերևույթ իրավախախտման նկարագրությունը,

3) սույն օրենքի այն դրույթը, որը պատասխանատվություն է նախատեսում տվյալ խախտման համար,

4) վարույթով պատասխանողի անունը, ազգանունը (անվանումը),

5) որոշումն ստորագրելու ժամանակը (տարեթիվը, ամիսը, օրը),

6) որոշումն ստորագրող պաշտոնատար անձի պաշտոնը, անվան սկզբնատառը, ազգանունը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովն փաստում է, որ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի շրջանակում քննարկվող առերևույթ իրավախախտման վերաբերյալ վարույթով պատասխանողի համար իրավական որոշակիությունը և կանխատեսելիությունը երաշխավորվում է վարույթ հարուցելու մասին որոշման մեջ նրան վերագրվող առերևույթ իրավախախտման

նկարագրությամբ և այդ վարքագիծը որպես իրավախախտում նախատեսող օրենքի համապատասխան դրույթի վկայակոչմամբ:

***<u>Յոթերորդ հարցադրման կապակցությամբ.</u>***

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝

1. Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) անձը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ վարչական մարմնի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ վարչական մարմնի վրա:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը կրում է անձը: Ընդ որում, այն դեպքում, երբ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքները հերքող բարենպաստ փաստական հանգամանքների վերաբերյալ վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա այդ փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը դրվում է նրա վրա:

Միաժամանակ Հանձնաժողովը գտնում է, որ վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունն անձը կարող է կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված ապացույցներ ներկայացնելու միջոցով:

Օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարչական վարույթն իրականացնում է Հանձնաժողովի գործունեության ընդհանուր կանոնների համաձայն՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն օրենքով, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթի համար սույն օրենքով առանձնահատկություններ սահմանված չլինելու դեպքում համապատասխան հարաբերությունների նկատմամբ կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթները:

Նման պայմաններում Հանձնաժողովն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված բարենպաստ փաստական հանգամանքների ապացուցման պարտականության վերաբերյալ կարգավորումները հավասարապես կիրառելի են տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթով պատասխանողի առնչությամբ, քանի որ այդ կապակցությամբ Օրենքը առանձնահատկություններ չի սահմանել:

***<u>Վերոշարադրյալ դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.</u>***

Ընկերության կողմից Կայքում և Հավելվածում ՌԴ-ից ՀՀ վերգետնյա առաքումների ժամկետը հայտարարվել է ≈5-10 աշխատանքային օր, որին զուգահեռ Ըներությունը նաև նշել է, որ պատվերների ուշացումները կարող են լինել մինչև 5 օր ժամկետով, մինչդեռ Հաշվետու ժամանակահատվածում հայտարարված առաքման տասնօրյա ժամկետի խախտումով է առաքվել պատվերների 63,63%-ը, որից տասնհինգօրյա ժամկետի խախտումով՝ 23,66%-ը:

Նշվածի կապակցությամբ էական է պարզաբանել հետևյալ հարցադրումները.

***1. <u>արդյո՞ք Առաքումների ժամկետի առնչությամբ Հրապարակումները կարող են առաջացնել թյուր փպավորության ստեղծման (ապակողմնորոշման) հնարավորություն.</u>***

***2. <u>արդյո՞ք Առաքումների ժամկետի առնչությամբ Հրապարակումներում փրամադրվող փեղեկությունը հնարավորություն է փալիս ամբողջական պատկերացում կազմել առաքման ժամկետի վերաբերյալ.</u>***

***3. <u>արդյո՞ք Առաքումների ժամկետի առնչությամբ գովազդները համապատասխանում են գովազդի մասին օրենսդրությանը:</u>***

***<u>Առաջին հարցադրման կապակցությամբ.</u>***

Ընկերության կողմից Հրապարակումներում առաքումների ժամկետը հայտարարվել է ≈5-10 աշխատանքային օր, որին զուգահեռ Ըներությունը նաև նշել է, որ պատվերների ուշացումները կարող են լինել մինչև 5 աշխատանքային օր ժամկետով:

Վերոգրյալը տպավորություն է ստեղծում, որ ՌԴ-ից ՀՀ վերգետնյա առաքումների ժամկետը տատանվում է 5-10 աշխատանքային օրվա միջակայքում, և որ հնարավոր ուշացումը կարող է լինել առավելագույնը 5 աշխատանքային օր:

Մինչդեռ, Ընկերության կողմից Հաշվետու ժամանակահատվածում հայտարարված առաքման տասնօրյա ժամկետի խախտումով է առաքվել պատվերների 63,63%-ը՝

պատվեր, որից տասնհինգօրյա ժամկետի խախտումով՝ 23,66%-ը՝ պատվեր:

Ստացվում է, որ Ընկերության կողմից Հաշվետու ժամանակահատվածում յուրաքանչյուր չորրորդ պատվեր իրականացվել է ժամկետի խախտմամբ, այսինքն, Հաշվետու ժամանակահատվածում սպառողների 1/4-ը պատվերն ստացել է ակնկալած տասնհինգօրյա ժամկետից ուշ, իսկ մինչև 10 աշխատանքային օր տևողությամբ առաքվել է պատվեր, տոկոսային արտահայտությամբ՝ 36,35%, այսինքն, որպես հիմնական պայման հայտարարված առավելագույն տասնօրյա ժամկետը փաստացի պահպանվել է պատվերների մոտ 1/3-ի դեպքում, այլ կերպ ասած՝ սպառողների 1/3-ն է

պատվերը ստացել ակնկալած մինչև տասնօրյա ժամկետում: Նշվածը վկայում է այն մասին, որ Հաշվետու ժամանակահատվածում ավելի մեծ թիվ է կազմել որպես բացառություն սահմանված 10-15 աշխատանքային օր ժամկետում պատվերը ստացած անձանց քանակը:

Այսպիսով, Ընկերության կողմից Հրապարակումներում առաքման ժամկետների վերաբերյալ տրամադրվում է թյուր տեղեկատվություն, որի արդյունքում սպառողների մոտ ողջամտորեն ձևավորվում է ակնկալիք առ այն, որ իրենց պատվերը որպես կանոն կստանան 10 աշխատանքային օրում, բացառիկ դեպքերում 11-15 աշխատանքային օրվա ընթացքում:

Ուշագրավ է, որ Ընկերության կողմից 2022 թվականի ապրիլի 21-ից մինչև 2022 թվականի մայիսի 10-ն (Վարույթի հարուցման օրը) ընկած ժամանակահատվածում ևս ՌԴ-ից ՀՀ վերգետնյա առաքումներից մինչև 10 աշխատանքային օր ներառյալ տևողությամբ առաքվել է    պատվեր, տոկոսային արտահայտությամբ 11,23%, իսկ

պատվերը՝ տոկոսային արտահայտությամբ 26,6%-ը, գերազանցել է առաքումների հայտարարված շեղումներով ժամկետները:

Հիմք ընդունելով նշված փաստակազմը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում քննարկել նաև հետևյալ հարցադրումները.

<u>*Ա) արդյո՞ք Ընկերությունն ունեցել է Առաքումների համար ≈5-10 աշխատանքային օր ժամկետ սահմանելու բավարար հիմք,*</u>

<u>*Բ) արդյո՞ք Ընկերությունը հիմնավորել է, որ ուշացումների պատճառները եղել են արտակարգ և անկանխատեսելի և դրանք ծագել են ≈5-10 աշխատանքային օր ժամկետը սահմանելուց հետո,*</u>

<u>*Գ) արդյո՞ք հայտարարված ժամկետը 2022 թվականի հուլիս ամսին փոփոխելով Ընկերությունը գործել է բարեխիղճ:*</u>

<u>***«Ա» հարցադրման կապակցությամբ.***</u>

Հանձնաժողովի նախագահի պաշտոնակատարի թիվ 004225 գրության 3-րդ կետով Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել Ընկերության կողմից 2021 թվականին ՌԴ-ից ՀՀ իրականացված վերգետնյա առաքման ծառայության տեսակների, դրանցից յուրաքանչյուրի ժամկետների և հասույթի վերաբերյալ:

Ի պատասխան թիվ 004225 գրության՝ Ընկերությունը 2022 թվականի օգոստոսի 16-ին Հանձնաժողով է ներկայացրած գրությամբ և ի լրումն դրա օգոստոսի 25-ին ներկայացրած գրությամբ հայտնել է, որ առաքման ծառայության ժամկետների վերաբերյալ պահպանված տեղեկատվություն առկա չէ:

Հանձնաժողովի նախագահի թիվ 006613 գրությամբ Ընկերությունից պահանջվել է ներկայացնել տեղեկատվություն այն մասին, թե ո՞ր հանգամանքն (հանգամանքները) է Ընկերության կողմից հիմք հանդիսացել 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի մայիսի 10-ն ընկած ժամանակահատվածում ՌԴ–ից ՀՀ վերգետնյա առաքումներ իրականացնելիս ≈5-10 աշխատանքային օր, իսկ հնարավոր տատանումների համար մինչև 5 աշխատանքային օր ժամկետների սահմանման համար: Ընկերությունը, ի պատասխան թիվ 006613 գրության, հայտնել է, որ ՌԴ-ից ՀՀ վերգետնյա առաքումների համար ≈ 5-10 աշխատանքային օր ժամկետը սահմանվել է

դեռևս 2016 թվականի մայիս ամսից՝ երեք անգամ նախնական թեստային առաքումները կազմակերպելուց հետո: Նշել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված ժամկետը սահմանվել է դեռևս վեց տարի առաջ՝ Ընկերությունը հայտնել է, որ դրա վերաբերյալ որևէ փաստաթուղթ կամ տեղեկատվություն չի պահպանվել:

Ընկերությունը, ի պատասխան թիվ 006613 գրության, 2022 թվականի հոկտեմբերի 31-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ ՌԴ-ից ՀՀ վերգետնյա առաքումների համար ≈ 5-10 աշխատանքային օր ժամկետը սահմանվել է դեռևս 2016 թվականի մայիս ամսից՝ երեք անգամ նախնական թեստային առաքումները կազմակերպելուց հետո: Թեստային առաքումների արդյունքում առաքման միջին տևողությունը կազմել է ութ աշխատանքային օր, որի արդյունքում սահմանվել է ≈ 5-10 աշխատանքային օր ժամկետը:

Հատկանշական է, որ մի դեպքում Ընկերությունը հայտնել է, որ առաքման ծառայության ժամկետների վերաբերյալ պահպանված տեղեկատվություն առկա չէ, մյուս դեպքում հայտնել է, որ ՌԴ-ից ՀՀ վերգետնյա առաքումների համար ≈ 5-10 աշխատանքային օր ժամկետը սահմանվել է դեռևս 2016 թվականի մայիս ամսից՝ երեք անգամ նախնական թեստային առաքումները կազմակերպելուց հետո: Այսինքն, Ընկերության կողմից տրամադրված տեղեկատվությունների մեջ առկա է հակասություն:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Առաքումների ժամկետը 2016 թվականից սահմանած լինելու դեպքում էլ Ընկերությունը չի պարզաբանել, թե ինչու՞ է հենց 3 թեստային առաքումների արդյունքում հայտարարել ժամկետը: Միաժամանակ Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերությունը չի նշել, թե ժամկետը հայտատարելուն նախորդող ո՞ր ժամանակահատվածում են իրականացվել առաքումները, ինչպե՞ս և ի՞նչ պարբերականությամբ, ընդ որում չի ներկայացրել նաև թեստային առաքումների վերաբերյալ ապացույցներ:

Այսպիսով, հայտարարելով Առաքումների ժամկետները՝ Ընկերությունը չի ներկայացրել հայտարարված ժամկետի իրական լինելը հիմնավորող հանգամանքներ, այդ թվում՝ չի բացահայտել թեստային առաքումների ժամկետը և ժամկետ սահմանաելու համար թեստային առաքումները 3 անգամ կազմակերպելու բավարար լինելու հանգամանքը, ինչպես նաև փոխադրման գործընթացի առանձին փուլերի ժամկետները և հնարավոր արտակարգ դեպքերի ժամկետները, մինչդեռ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայությունն ապացուցելու պարտականությունը կրում էր Ընկերությունը, քանի որ միայն Ընկերությունը կարող է տիրապետել իր սահմանած ժամկետների հիմքում ընկած հանգամանքներին:

Այսպիսով, Վարույթի շրջանակներում չի ապացուցվել, որ Ընկերությունը հայտարարված ժամկետը սահմանել է այդ ժամկետը ձևավորող բավարար գործոնների հաշվառմամբ:

Առաքման ժամկետները բարեխղճորեն սահմանելու և հասարակությանը մոլորեցնելու դիտավորության բացակայության մասին Ընկերության փաստարկների

համատեքստում Հանձնաժողովը հարկ է համարում նաև արձանագրել, որ Ընկերության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՌԴ-ից ՀՀ վերգետնյա առաքումով (≈5-10 աշխատանքային օր տևողությամբ հայտարարված) թվով պատվերներից, որից մինչև 5 աշխատանքային օր տևողությամբ առաքվել է պատվեր (1,28%), մինչև 10 աշխատանքային օր ներառյալ տևողությամբ առաքվել է պատվեր (36,35%), 10 օրը գերազանցող ժամկետում առաքվել է պատվեր, տոկոսային արտահայտությամբ՝ 63,63%: Այսինքն, առաքումների առավելագույն ժամկետը գործնականում գերազանցելուց բացի, Ընկերության վարքագիծը խնդրահարույց է նաև առաքման ժամկետի նվազագույն շեմի մասով՝ նկատի ունենալով, որ Ընկերության կողմից գործնականում հայտարարված նվազագույն ժամկետում առաքվել է պատվերների 1,28%-ը, իսկ հայտարարված մինչև տասն աշխատանքային օրում (որն ընդհանուր կանոնն է) առաքվել է պատվերների 36,35%-ը:

***<u>«Բ» հարցադրման կապակցությամբ.</u>***

Դիրքորոշմամբ և Նիստին, որպես ուշացումների պատճառ Ընկերությունը վկայակոչել է Լարսի ավտոճանապարհի փակ լինելու հանգամանքը:

Հանձնաժողովը փաստում է, որ Ընկերությունը, մասնագիտացված ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում 2016 թվականից և Վարույթի փաստերից բխում է, որ, լինելով մասնագիտացված ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ձեռնարկատիրական սուբյեկտ, Առաքումների համար սահմանել է ժամկետի մոտավոր միջակայք՝ ողջամտորեն կանխատեսելով նաև այդ ժամկետի խախտման հնարավորությունը, մինչդեռ փաստացի առաքումների մոտ 1/4-ի դեպքում առաքումների ժամկետը գերազանցել է Ընկերության հաշվարկած ուշացումների ժամկետը: Ստացվում է, որ Ընկերությունը որոշակի քայլեր ձեռնարկել է Առաքման ժամկետն իրականությանը համապատասխան սահմանելու ուղղությամբ, մինչդեռ դա եղել է ոչ բավարար և հաշվի չեն առնվել ժամկետի վրա հնարավոր ազդեցություն ունեցող բոլոր հանգամանքները, որի արդյունքում Ընկերության կողմից Առաքումների համար սահմանվել է օբյեկտիվորեն չհիմնավորված ժամկետ:

Միաժամանակ Ընկերությունը չի հիմնավորել, որ իր կողմից վկայակոչված՝ Լարսի ավտոճանապարհի փակ լինելու հանգամանքն արտակարգ և անկանխատեսելի էր: Ավելին, Լարսի ավտոճանապարհի փակվելու կանխատեսելիության մասին է վկայում Ընկերության կողմից հայտարարված ժամկետների պահպանումը հիմնավորող, Լարս ավտոճանապարհի բաց լինելու պայմաններում իրականացված առաքումների վերաբերյալ տվյալներ ներկայացնելը, որոնք ներկայացվել են 2021 թվականի հունիսի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածը Հաշվետու ժամանակահատվածի հետ համեմատելու նպատակով:

Հանձնաժողովն արձանագրում է, որ հաշվի առնելով Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհի առավելապես փակ լինելու, իսկ բաց եղած օրերին ռուսական կողմում մեծաթիվ կուտակված բեռնատար ավտոմեքենաների առկայության հանգամանքները, Ընկերությունը, գործունեություն իրականացնելով նաև 2021 թվականին, ուներ բավարար հիմքեր ենթադրելու, որ 2022 թվականի հունվարից ապրիլ ամիսներին ևս հնարավոր է

ստեղծվեն նույն խոչընդոտները՝ Առաքումները ժամանկին կազմակերպելու համար: Ընդ որում, այս դիրքորոշումը վերաբերում է նաև 2021 թվականին նախորդող տարիներին:

Այսպիսով, Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերությունը բավարարվել է զուտ Լարսի ավտոճանապարհի փակ լինելու հանգամանքի վկայակոչմամբ և չի հիմնավորել, որ այդ հանգամանքն արտակարգ էր և Ընկերության համար անկանխատեսելի, ինչպես նաև չի ներկայացրել հստակ հիմնավորում, թե այդ հանգամանքներն ինչպե՞ս են ազդել Առաքումների ժամկետների վրա:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ ուշացման պատճառի (պատճառների) արտակարգ և անկանխատեսելի լինելու վերաբերյալ Ընկերությունը ապացույցներ չի ներկայացրել:

***<u>«Գ» հարցադրման կապակցությամբ.</u>***

Ընկերությունը հայտնել է, որ գնահատելով առաքման ժամկետների ուշացման պատճառները՝ Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի Հանրապետության միջև ռազմական գործողությունների արդյունքում իրավիճակի սրացմամբ պայմանավորված 2022 թվականի հուլիսի 29-ին առաքման ժամկետները երկարացրել է՝ սահմանելով ≈ 7-13 աշխատանքային օր, որը պահպանվում է, իսկ ժամկետի փոփոխությունը փաստում է այն մասին, որ Ընկերությունը որևէ կերպ նպատակ չի հետապնդում մոլորեցնելու իր հաճախորդներին, ավելին՝ ձեռնարկում է հնարավոր բոլոր միջոցները ապահովելու համար առաքման ժամկետների կանխատեսելիությունը:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Հաշվետու ժամանակահատվածը ներառում է ավելի քան 100 օր, ինչը նշանակում է, որ այդ ժամանակահատվածում հաջորդաբար կարող էին իրականացվել շուրջ 10 առաքումներ, ուստի հատկապես ծմռանը Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհի փակվելու վերաբերյալ անցած տարիների վիճակագրության տիրապետելուց բացի, Ընկերությունը, ունենալով գործնականում չպահպանված ժամկետներ, բարեխիղճ գործելու պարագայում, պարտավոր էր ավելի վաղ արձագանքել առաջացած իրավիճակին՝ փոփոխելով սահմանված ժամկետները:

Հատկանշական է, որ Ընկերությունը առաքումների ժամկետը փոփոխել է Վարույթի հարուցումից հետո, իսկ ռուս-ուկրաինական շարունակվող իրադարձությունները սկսվել են 2022 թվականի փետրվարին, ինչը նշանակում է, որ դրանցով պայմանավորված առաքումների խոչընդոտներն ի հայտ են եկել ավելի վաղ, և Ընկերությունը սահմանված ժամկետը փոխելու ազդակ ունեցել է ավելի վաղ, ուստի ստեղծված իրավիճակին Ընկերությունը պետք է արձագանքեր ավելի վաղ, քան 2022 թվականի հուլիս ամիսը:

Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերությունը չի ներկայացրել ապացույցներ՝ սահմանված նոր ժամկետը պահպանելու վերաբերյալ:

Այսպիսով, Ընկերությունն ունեցել է օբյեկտիվ հիմքեր փոփոխելու սահմանված ժամկետը (թեկուզև սեզոնային), սակայն չի արել, ուստի, Հանձնաժողովի գնահատմամբ, Ընկերության վարքագիծն անբարեխիղճ է նաև ժամկետը 2022 թվականի հուլիսի 29-ին փոփոխելու առնչությամբ:

Առաջին հարցադրման կապակցությամբ ողջ շարադրվածն ամբողջացնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ընկերության կողմից ՌԴ-ից ՀՀ վերգետնյա առաքումների (≈5-10 աշխատանքային օր տևողությամբ հայտարարված) վերաբերյալ հրապարակումներում տրվել է թյուր (ապակողմնորոշող) տեղեկատվություն և մատուցվող ծառայությունների վերաբերյալ հրապարակումներն իրականացվել են անբարեխիղճ ձևով:

***<u>Երկրորդ հարցադրման կապակցությամբ</u>***.

Ընկերության կողմից Հրապարակումներում ՌԴ-ից ՀՀ վերգետնյա առաքումների ժամկետը հայտարարվել է ≈5-10 աշխատանքային օր, որին զուգահեռ Ըներությունը նաև նշել է, որ պատվերների ուշացումները կարող են լինել մինչև 5 օր ժամկետով:

Վերոգրյալից տպավորություն է ստեղծում, որ Առաքումների ժամկետը տատանվում է 5-10 աշխատանքային օրվա միջակայքում, և որ հնարավոր ուշացումը կարող է լինել առավելագույնը 5 աշխատանքային օր:

Մինչդեռ Կայքի մեկ այլ՝ «Ընդհանուր դրույթներ և պայմաններ» բաժնի 3-րդ գլխի 7-րդ կետում հրապարակված է հետևյալը. «Գլոբբինգն իրավունք ունի այն ժամանակահատվածում, երբ պատվերների ընդհանուր ծավալը մեծանում է (տոնական օրեր, զեղչային ծրագրեր կամ միջոցառումներ և այլն) հետաձգել պատվերների առաքման ժամկետները, ինչպես նաև կասեցնել որոշակի Ծառայությունների մատուցումը»: Նույն գլխի 10-րդ կետում հրապարակված է հետևյալը. «Գլոբբինգը պատասխանատվություն է կրում միայն իր պահեստ հասած և պահեստում ընդունված Պատվերներ փոխադրման համար: Գլոբբինգի կողմից հայտարարված փոխադրման ժամկետները պայմանական են և դրանց խախտման համար Ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում»:

Ստացվում է, որ Կայքում հրապարակված «Ընդհանուր դրույթներ և պայմաններ» բաժնում մի կողմից սպառողին ներկայացվում է ծառայության մատուցման ժամկետ, իսկ մյուս կողմից այն պայմանական է: Այսինքն, Ծառայության նույն պայմանի մասին կայքի տարբեր բաժիններում առկա են հակասող տվյալներ: Մյուս կողմից, ժամկետները ներկայացվում են առանց դրա էության (պայմանական լինելու) մասին «Ընդհանուր դրույթներ և պայմաններ» բաժնում առկա դրույթների առկայության նշման կամ դրանց գոյության և հասանելիության աղբյուրի մասին ծանուցման:

Ավելին, Հավելվածում «Ընդհանուր դրույթներ և պայմաններ» բաժին առկա չէ, հետևաբար Հավելվածից օգտվող սպառողին ժամկետի պայմանական լինելու վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի չէ:

Այսպիսով, առաջարկվող ծառայության վերաբերյալ տրամադրվել է հիմնական հրապարակմամբ հայտարարված ժամկետից տարբերվող ժամկետ, և առկա են որոշակի վերապահումներ, ուստի հիմնական հրապարակմամբ տրամադրված տեղեկատվությունը ոչ ամբողջական է:

***<u>Երրորդ հարցադրման կապակցությամբ</u>***.

Առաջին հարցադրման վերլուծությունը և գովազդի մասին օրենսդրության համադրությունը թույլ են տալիս արձանագրել, որ առաքումների վերաբերյալ

գովազդները ապակողմնորոշման հնարավորություն ստեղծող տեղեկություններ պարունակելու հիմքով համարվում է որպես անբարեխիղճ գովազդներ:

Միևնույն ժամանակ, երկրորդ հարցադրման վերլուծությունը և գովազդի մասին օրենսդրության համադրությունը թույլ են տալիս արձանագրել, որ առաքումների ժամկետների վերաբերյալ գովազդները, թվարկած էական պայմանները կամ այդ պայմանների գոյության և դրանց հասանելիության աղբյուրի մասին տեղեկություն չպարունակելու հետևանքով ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալու հիմքով՝ համարվում են հավաստիության խախտմամբ գովազդներ: Անկախ դրանից էլ Առաքումների ժամկետների վերաբերյալ գովազդները կարող են դիտարկվել նաև օրենքին այլ ձևով հակասող գովազդներ:

Վերոնշյալի հաշվառմամբ Հանձնաժողովը փաստում է, որ Ընկերության կողմից Առաքումների վերաբերյալ գովազդները օրենքին հակասող են:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերության կողմից Առաքումների ժամկետների հրապարակումների շրջանակում (1) տեղեկությունը թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման) հնարավորություն առաջացնող ձևով ներկայացնելը, (2) Առաքումների իրական ժամկետի վերաբերյալ սպառողին ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալը, (3) ինչպես նաև օրենքին հակասող գովազդ իրականացնելն ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ պարունակում են հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն իրավախախտման հատկանիշներ:

Այսպիսով, Հանձնաժողովը հաստատված է համարում Ընկերության կողմից Առաքումների ժամկետների առնչությամբ հրապարակումների (գովազդի) միջոցով հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության իրավախախտում կատարված լինելը, որոնց կապակցությամբ օրենսդրությամբ նախատեսված են իրավական հետևանքներ՝ պատասխանատվության միջոցների կիրառում:

***<u>2) Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի կապակցությամբ.</u>***

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանելու մասին» թիվ 395-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 395-Ա որոշում**) սահմանված պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը (այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն**) կարգավորում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառում պատասխանատվության միջոցների ընտրության և տուգանքի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

Մեթոդաբանության 6-րդ կետի համաձայն՝ պատասխանատվության միջոցի ընտրությունը և տուգանքի հաշվարկումը յուրաքանչյուր դեպքում իրականացվում է վարույթի ընթացքում հաստատված փաստական հանգամանքների քննարկման արդյունքում Հանձնաժողովի հայեցողությամբ՝ հաշվի առնելով Մեթոդաբանությամբ ամրագրված դրույթները և վարույթի առանձնահատկությունները:

Մեթոդաբանության 12-րդ կետի համաձայն՝ տուգանքը հաշվարկվում է հետևյալ փուլերով.

1) որոշվում է տուգանքի բազային գումարը.

2) գնահատվում են վարույթի ընթացքում հաստատված ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, և հիմքերի առկայության դեպքում բազային գումարը ենթարկվում է համապատասխան փոփոխությունների.

3) Մեթոդաբանությամբ նախատեսված դեպքերում համապատասխանեցվում է պատասխանատվության միջոցը:

Մեթոդաբանության 13-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը տուգանքը հաշվարկում է Տ = Բ + Բ x (Ծ - Մ) բանաձևով, որտեղ՝ Տ-ն տուգանքի չափն է, Բ-ն տուգանքի բազային գումարն է, Ծ-ն բոլոր ծանրացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարն է, Մ-ն բոլոր մեղմացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարն է:

***<u>Բազային գումարի հաշվարկը.</u>***

Մեթոդաբանության 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունը ըստ բնույթի մրցակցային իրավախախտում է:

Մեթոդաբանության 14-րդ կետի համաձայն՝ մրցակցային իրավախախտումների դեպքում տուգանքի բազային գումարը որոշվում է ապրանքի իրացումից ստացված հասույթի գումարի, իրավախախտման համապատասխան ծանրության խմբի համար սահմանված տոկոսի և իրավախախտման տևողության արտադրյալի հաշվարկման միջոցով՝ Բ = Հ x Խ x Ժ բանաձևով, որտեղ՝ Բ-ն տուգանքի բազային գումարն է մրցակցային իրավախախտումների դեպքում, Հ-ն ապրանքի իրացումից ստացված հասույթի գումարն է, Խ-ն իրավախախտման համապատասխան ծանրության խումբն է, Ժ-ն իրավախախտման տևողությունն է:

*Ապրանքի իրացումից ստացված հասույթ.*

Մեթոդաբանության 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ապրանքների իրացումից ստացված հասույթ է համարվում իրավախախտման առարկա հանդիսացող կամ իրավախախտման մեջ ներգրավված ապրանքների և դրանց փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացումից ստացված հասույթը:

Մեթոդաբանության 17-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունման պահին չդադարեցված իրավախախտումների դեպքում իրացման հասույթի կամ ընդհանուր հասույթի չափի հաշվարկումն իրականացվում է վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող տարվա վաճառքի հասույթի կամ ընդհանուր հասույթի չափից:

Տվյալ պարագայում Ընկերության կողմից իրավախախտմանը նախորդող տարվա՝ 2021 թվականի ընթացքում իրավախախտման առարկա հանդիսացող ՌԴ-ից ՀՀ վերգետնյա առաքումներից ստացված հասույթի չափը կազմել է ՀՀ դրամ:

*Իրավախախտման ծանրության խումբը.*

Հիմք ընդունելով Մեթոդաբանության ենթակետը՝ սույն գործով ծանրության խումբը պետք է հաշվարկել տոկոս դրույքաչափով:

*Իրավախախտման տևողությունը.*

Իրավախախտման տևողությունը հաշվարկելիս հիմք են ընդունվում Մեթոդաբանության կետերը:

Սույն գործով Ընկերության կողմից իրավախախտում կատարվելու սկզբնաժամկետ է համարվում թվականի ամիսը, իսկ իրավախախտման վերաբերյալ վարույթը հարուցվել է 2022 թվականի մայիսի 10-ին՝ թիվ 183-Ա որոշմամբ: Ընկերության իրավախախտման կատարման ժամանակահատվածը , հետևաբար իրավախախտման տևողության գործակիցը է:

Վերոնշյալից բխում է, որ տուգանքի բազային գումարը կազմում է ՀՀ դրամ՝ ըստ հետևյալ հաշվարկի.

Բ= Հ x Խ x Ժ= x x = 2 882 817 ՀՀ դրամ:

***<u>Պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ.</u>***

Մեթոդաբանության 31-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը դիտարկում է ծանրացնող և մեղմացնող հանգամանքները և վարչական ակտում արտացոլում միայն այն հանգամանքները, որոնք հաստատվել են համապատասխան վարույթի ընթացքում:

Մեթոդաբանության 32-րդ կետի համաձայն՝ մեղմացնող հանգամանքի առկայության ապացուցման բեռը կրում է վարույթով պատասխանողը:

Մեթոդաբանության 27-32-րդ կետերով սահմանված են պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև սահմանված են բազային գումարից ծանրացնող և մեղմացնող հանգամանքների հաշվարկման դրույքաչափերը:

Սույն գործով Հանձնաժողովի կողմից որպես ծանրացնող և որպես մեղմացնող որևէ հանգամանք չի հայտնաբերվել և չի հաստատվել:

Այսպիսով, ծանրացնող և մեղմացնող հանգամանքների համար սահմանված դրույքաչափը կազմում է 0%:

***Տուգանքի հաշվարկը.***

Վերոշարադրյալից հետևում է, որ տուգանքի չափը կազմում է 2 882 817 ՀՀ դրամ՝ համաձայն հետևյալ հաշվարկի.

S= Բ + Բ x (Ծ - Մ) = 2 882 817 + 2 882 817 x (0%-0%) = 2 882 817 ՀՀ դրամ:

Այսպիսով, հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության համար Ընկերությանն անհրաժեշտ է նշանակել 2 882 817 (երկու միլիոն ութ հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր տասնյոթ) ՀՀ դրամի չափով տուգանք:

***3) Ընկերությանը պատասխանատվությունից ազատելու հարցի կապակցությամբ.***

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, տուգանքի չափը նվազեցնելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը կամ տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը կարող է անձին ազատել պատասխանատվությունից, եթե նրա վարքագիծը թեև ձևականորեն պարունակում է սույն օրենքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում, այսինքն՝ որևէ անձի կամ պետությանն էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել:

Վկայակոչված դրույթներից հետևում է, որ անձի կատարած արարքի նվազ կարևորություն ունենալու հարցը Հանձնաժողովի կողմից ենթակա է քննարկման այն դեպքում, երբ տնտեսավարող սուբյեկտը բարձրացնում է իր կողմից դրսևորած վարքագծի էական վնաս պատճառած չլինելու հարցը և հիմնավորվում է այդ արարքով որևէ անձի կամ պետությանը էական վնաս պատճառած չլինելու հանգամանքը կամ երբ Հանձնաժողովն է հայտնաբերում այդպիսի հիմքեր: Ընդ որում, վնասի էական լինելը կամ չլինելը որոշվում է յուրաքանչյուր գործով՝ ի թիվս այլնի, հաշվի առնելով անձի դրսևորած վարքագիծը, դրա դրդապատճառները, շարժառիթները և հետևանքները:

Վերոշարադրյալի առնչությամբ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

1. առաքման ժամկետն էական նշանակություն ունի ծառայության ընտրության համար և տարբեր ժամկետներով փոխադրման ծառայությունները փոխադարձ փոխարինելի չեն: Այսպես, Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ փոխադարձ փոխարինելի ապրանքները ապրանքներն են, որոնք կարող են համեմատվել ըստ իրենց գործածության նշանակության, կիրառման, որակական, տեխնիկական, գնային կամ այլ հատկանիշներով այնպես, որ ձեռք բերողը սպառման գործընթացում կամ արտադրական նպատակներով օգտագործման ընթացքում փաստացի փոխարինում է կամ պատրաստ է փոխարինելու դրանք մեկը մյուսով:

Այսինքն, ժամկետն առաքման ծառայությունն ինքնուրույն ապրանքային շուկա դարձնող հանգամանք է, որպիսի փաստը Նիստին ընդունել է նաև Ընկերության ներկայացուցիչը:

2. Ընկերության վարքագիծն ունեցել է ազդեցություն մրցակցային միջավայրի վրա, մասնավորապես՝ քանի որ ժամկետով պայմանավորված առաքումը դառնում է ինքնուրույն ապրանք և ձևավորում առանձին ապրանքային շուկա, ժամկետը ունի մրցակցային կարևորություն և կարող է բերել մրցակցային առավելության: Սրանից զատ, նույնիսկ բոլոր մրցակիցների կողմից նույնաբնույթ իրավախախտումների կատարումը չի բացառում մրցակցային առավելությունների առաջացումը, քանի որ այն առնվազն կարող է դրսևորվել համապատասխան ապրանքային շուկա մտնելու ցանկություն ունեցող տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ, իսկ մյուս կողմից ինքնին խախտվում է հենց առկա մրցակիցների միջև հավասարակշռությունը, քանի որ խախտման հանգամանքները յուրաքանչյուրի դեպքում տարբեր են:

3. Առաքման ժամկետները սպառողների համար ունեն կարևորություն, մասնավորապես՝ սպառողների համար առաքման ժամկետի խախտումը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել հետաքրքրության կորստի առաքվող ապրանքի առնչությամբ և խախտման հետևանքը սպառողի համար կարող է կրել անդառնալի բնույթ:

4. Հաշվետու ժամանակահատվածում հայտարարված առաքման տասնօրյա ժամկետի խախտումով է առաքվել ընդհանուր պատվերների 63,63%-ը՝ պատվերից

պատվեր, որից առավելագույն տասնհինգօրյա ժամկետի խախտումով՝ ընդհանուր պատվերների 23,66%-ը՝ պատվեր: Այսինքն, որպես հիմնական պայման հայտարարված տասնօրյա ժամկետը փաստացի պահպանվել է պատվերների մոտ 1/3-ի դեպքում, այլ կերպ ասած՝ սպառողների 1/3-ն է պատվերը ստացել ակնկալած մինչև տասնօրյա ժամկետում, հետևաբար սպառողների մոտ 2/3-ին չի մատուցվել իր

ակնկալած ծառայությունը, ուստի Հաշվետու ժամանակահատվածում ավելի մեծ թիվ է կազմել որպես բացառություն սահմանված 10-15 աշխատանքային օր ժամկետում պատվերը ստացած անձանց քանակը:

5. Ընկերության «Globbing Armenia» անվանումով ֆեյսբուքյան էջի «Отзывы» բաժնում, ի թիվս այլնի, առկա են եղել Ընկերության ինչպես ընդհանուր գործունեության (մատուցած ծառայությունների) վերաբերյալ բացասական արձագանքներ (ծանրոցների վնասման, աշխատակիցների թերացման, անփույթ և անտարբեր աշխատանքի), այնպես էլ ծանրոցները ժամանակին առաքելու, առաքման ժամկետների փոփոխությունների և վերջնաժամկետ չնշելու վերաբերյալ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ ժամկետների ոչ ճիշտ ներկայացումն ունի էական ազդեցություն ինչպես մրցակցային միջավայրի, այնպես էլ սպառողների շահերի վրա:

Նման պայմաններում Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերությանը պատասխանատվությունից ազատելու Օրենքով նախատեսված հիմք առկա չէ:

***<u>4) Ընկերությանը հանձնարարություն տալու հարցի կապակցությամբ.</u>***

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը (...) սույն օրենքը խախտելու համար տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վարույթի շրջանակներում որպես իրավախախտում է որակվել Հաշվետու ժամանակահատվածում Առաքումների ժամկետի առնչությամբ Ընկերության վարքագիծը, Հանձնաժողովը գտնում է, որ այդ իրավախախտումը հնարավոր չէ շտկել, ուստի Ընկերությանը հանձնարարություն տալու անհրաժեշտությունը բացակայում է:

***<u>7. Եզրափակիչ մաս.</u>***

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով, 100-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ, 71-րդ հոդվածներով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. «Գլոբալ Շիփփինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2022 թվականի հունվարի 1-ից մինչև ապրիլի 20-ն ընկած ժամանակահատվածում ՌԴ-ից ՀՀ վերգետնյա առաքումների ժամկետի առնչությամբ կատարված հրապարակումների շրջանակում տեղեկությունը թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման) հնարավորություն առաջացնող ձևով ներկայացնելը, առաքումների իրական ժամկետի վերաբերյալ սպառողին ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալը, ինչպես նաև օրենքին հակասող գովազդ

իրականացնելը որակել որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն (այսուհետ՝ **Օրենքի խախտում**):

2. Օրենքի խախտման համար «Գլոբալ Շիփփինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել 2 882 817 (երկու միլիոն ութ հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր տասնյոթ) ՀՀ դրամի չափով տուգանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Գլոբալ Շիփփինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշման 2-րդ կետը դրանով նշանակված տուգանքը մինչև սույն որոշման անբողոքարկելի դառնալը չվճարելու դեպքում ենթակա են հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

**ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. նոյեմբերի 9
Երևան